

**ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2005-2015 թթ.**

Մասնագիտական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում ներկայացված է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությամբ, միջին մասնագիտական կրթությամբ, բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթությամբ:

Խորհրդային շրջանում, երբ հանրապետությունը ուներ արդյունաբերական հզոր ներուժ, այդ հաստատությունները կարևոր դերակատարում ունեին արդյունաբերական ձեռնարկությունները որակյալ բանվորական, ինձեներական և կառավարչական ներուժով ապահովելու համար: Մասնագիտական ուսումնական հաստատությունները կաղըեր էին մատակարարում նաև ոչ արդյունաբերական ոլորտներին՝ զյուղատնտեսությանը, առողջապահությանը, կրթությանը, շինարարությանը, տրանսպորտին, կապին և այլն: Սակայն ԽՍՀՄ-ում մասնագիտական կաղըերի պատրաստումն ուներ իր առանձնահատկությունը, որը ծառայում էր մեծ երկրի պահանջներին, ԽՄԿԿ զաղափարախոսությանը: Կրթությունը զաղափարականցված էր և մասնագիտական կրթության նպատակն էր ոչ միայն մասնագետ, այլ նաև համակողմանի զարգացած անհատ պատրաստելը, մարքսիզմի և սովորական կրթական հաստատությունների ուսումնական պլաններում, բացի ընդհանուր և հատուկ մասնագիտական կրթարոկից, մեծ տեղ էին զբաղեցնում ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական ու ընդհանուր մաթեմատիկական և բևագիտական կրթարոկները: Այդ առարկաների դասավանդումը արվում էր

մասնագիտական առարկաների հաշվին, սակայն դա տեղավորվում էր կրթության հայեցակարգի ընդհանուր տրամաբանության մեջ: Դետական բարձրագույն կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը ավարտելուց հետո շրջանավարտին նշանակում էին որևիցե պետական հիմնարկում աշխատանքի, որտեղ մեկ-երկու տարվա ընթացքում նա դառնում էր լիարժեք մասնագետ: Համակարգը ամբողջական էր և արդարացնում էր ինքն իրեն: Քանի որ ԽՍՀՄ-ը փակ երկիր էր, կրթությունը սպասարկում էր միայն այդ երկրի աշխատաշուկան, կամ, լավագույն դեպքում, որոշ զարգացող երկրների: ԽՍՀՄ-ում պլանավորվում էր, թե որ մասնագիտությունների գծով որքան կադրեր են անհրաժեշտ: Արդյունքում՝ գործազրկություն գրեթե չկար:

ԽՍՀՄ փլուզումից հետո մասնագիտական կրթության հայեցակարգը պետք է արմատապես փոփոխվէր: Անկախության առաջին տարիներին պատերազմի և շրջափակման ճիրաներում գտնվող Հայաստանի Հանրապետությունը չեր կարող կրթության ոլորտում դիմել վճռական քայլերի: Պատերազմից հետո անկառավարելի սեփականաշխորհման հետևանքավ հանրապետությունը չկարողացավ պահպանել իր արդյունաբերական հզոր ներուժը և վերածվեց ազրարային երկրի: Փոխվեց կրթությունը – աշխատաշուկա հարաբերությունը: Խնդիրը դժվարանում էր նաև այն պատճառով, որ աշխարհաբառական, սոցիալ-տնտեսական և տեխնոլոգիական ոլորտներում խորքային փոփոխությունները մեծ ազդեցություն էին թողել աշխատաշուկայի վրա: Այն վաղուց արդեն չեր սահմանափակվում մեկ երկրով, այլ վերածվել է զորայ, հաճախ վիրտուալ աշխատաշուկայի: Բնականաբար, այդ ամենը նոր մարտահրավեր էր մասնագիտական կրթության ոլորտին՝ և՝ կառուցվածքային, և՝ բովանդակային առումով:

1991 թ. ՀՀ-ում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները մասնագետներ էին պատրաստում 127 մասնագիտության գծով: Երջանավարտներին շնորհվում էր կրտսեր մասնագետի որակավորում: Համակարգում գործում էր 77 պետական ՄՄՌՀՀ (10 մասնաճյուղով), որոնցում ուսանում էր 28048 սովորող, և 62 ոչ պետական ՄՄՌՀՀ: 2001 թ. ՄՄՌՀՀ-ների թիվը 1991 թվականի համեմատությամբ (68 հաստատություն) աճեց 13,2 %-ով, իսկ ուսումնառուների թվաքանակը (40600) նվազեց 31 %-ով:

Համակարգում գործում էր 16 պետական (10 մասնաճյուղով) և 73 ոչ պետական բուհ: Պետական բուհերի թիվը 1991 թվականի համեմատությամբ 2001 թ. աճել էր 14,2 %-ով: Պետական բուհերում սովորում էր 42525, ոչ պետական բուհերում՝ 19755 ուսանող: Պետական բուհերում սովորողների թվաքանակը 1991 թվականի համեմատությամբ նվազել էր 35,7 %-ով:

Անկախության առաջին տասնամյակին մի շարք օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր և ծրագրեր ընդունվեցին, որոնցում փորձ արվեց ներկայացնել մասնագիտական կրթության նոր տեսլականը և կարգավորել ուսումնական կրթության մասին: Այսպես, ընդունվեցին «Կրթության մասին» (1999 թ. ապրիլի 14), «Բարձրագույն և հետքունական մասնագիտական կրթության մասին» (2005 թ. հունվարի 18), «Նախնական մասնագիտական (արհետագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» (2005 թ. հունիսի 8) ՀՀ օրենքները: 2001 թ. հունիսի 26-ին հաստատվեց «Կրթության զարգացման 2001-2005 թթ. պետական ծրագիրը»: Ծրագրով նախատեսվում էր հաղթահարել անցումա-

¹ Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2001-2005 թվականների պետական ծրագիր, էջ 1, <http://www.parliament.am/Legislation.php?sel=show&ID=1422&lang=arm#1>

յին փուլի դժվարությունները և 2005 թ. անցում կատարել կրթության համակարգի առաջանցիկ զարգացմանը:

2005 թ. մասնագիտական կրթության ոլորտում մեծ բարեփոխումներ սկսվեցին: 2004 թ. Լիսարոնի կոնվենցիան ՀՀ ԱԺ-ի կողմից վավերացնելու և 2005 թ. Բոլոնյան գործընթացին Հայաստանի Հանրապետության միանալուց հետո փոփոխություններ կատարվեցին բարձրագույն կրթության մինչ այդ ընդունված օրենքներում: Բոլոնյան հրակագիրը համաեվրոպական կրթական տարածք ստեղծելու հայտ էր ներկայացրել: Գլոբալացման հետևանքով կրթությունը պետք է պատասխաներ նոր մարտահրավերների:

2005 թ. ընդունվեց «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացման գերակայությունները և 2005-2008 թթ. գործողությունների պլանը»:

Մասնագիտական ուսումնական հաստատություններում ձեռքբերված գիտելիքները մեծ արագությամբ հեանում էին, դրանք անընդհատ նորացնելու կարիք ունեին, ուստի խիստ կարևորվեց կրթությունը ամբողջ կյանքի ընթացքում: Մասնագիտական կրթության ոլորտում կարևորվեց «սովորեցնել ինչպես ամբողջ կյանքի ընթացքում սովորել» մոտեցումը, որը պահանջում էր ուսուցման համակարգի խորքային փոփոխություն: 2009 թ. հոկտեմբերի 15-ին ՀՀ կառավարության N 43 արձանագրային որոշմամբ հաստատվեց «Ցկյանս ուսուցման հայեցակարգը», որում մասնավորապես նշվում էր. «...ցկյանս ուսումնառությունը պետք է դիտարկվի իբրև շարունակական և ծրագրված գործունեություն, որը նպաստում է գիտելիքների և հմտությունների ձեռքբերմանը, և վերջնական արդյունքում, անհատների, համայնքների և

ողջ հասարակության մասնագիտական կրթական կարողությունների զարգացմանը²:

Բարեփոխումները բարձրագույն կրթության ոլորտում Քոլեյան գործընթացի համատեքստում

Բարեփոխումների սկզբին հանրապետությունում կար 22 պետական բարձրագույն ուսումնական հաստատություն (բուհ) և 11 մասնաճյուղ (73716 ուսանողով)³: Մեծ թիվ էին կազմում նաև ոչ պետական ուսումնական հաստատությունները, որոնք կարևոր դերակատարում ունեին հատկապես սոցիալապես անապահով ուսանողներին կրթական ծառայություններ մատուցելու գործում: Բացի այդ՝ պետական բուհերում ցածր աշխատավարձերի պայմաններում դրանք վաստակելու լրացուցիչ հևարակություն էին ընձեռում գիտական հիմնարկների և բուհերի պրոֆեսորադասախոսական անձնակազմին: 2005 թ. հանրապետությունում կար 67 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն, որոնցում ուսուցանվում էր 24049 ուսանող:⁴ Հետագայում հանրապետության ժողովրդագրական հիմնախնդիրները, մի կողմից, ՀՀ ԿԳՆ վարած քաղաքականությունը, մյուս կողմից, աստիճանաբար հանգեցրին ոչ պետական ուսումնական հաստատությունների և նրանցում սովորող ուսանողների քանակի նվազմանը: Այսպես՝ 2010/2011 ուսումնական տարում հանրապետությունում գործում էր 23 պետական բարձրագույն ուսումնական հաստատություն (91404 ուսանողով)⁵, 51 բարձրագույն ոչ պետական ուսումնական հաստատություն (19599 ուսանողով)⁶,

² <http://www.gov.am/files/meetings/2009/3912.pdf>

³ Հայաստանը թիերով. 2006. Կրթության հիմնական ցուցանիշները. էջ 1. http://www.armstat.am/file/article/soc_05_5.pdf

⁴ Նոյն տեղում, էջ 11:

⁵ Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2010 թվականին, էջ 4. http://www.armstat.am/file/article/soc_10_11-12.pdf

⁶ Նոյն տեղում, էջ 16:

2015/2016 ուսումնական տարում՝ 23 պետական բարձրագույն ուսումնական հաստատություն (87304 ուսանողով)⁷, 37 ոչ պետական ուսումնական հաստատություն (9917 ուսանողով)⁸: Վիճակագրական տվյալների վերլուծությունից երևում է, որ ոչ պետական բուհերի ուսանողների քանակը վերջին 5 տարում նվազել է մոտ 2 անգամ: Արդարության համար նշենք նաև, որ ընթացող բարեփոխումների համատեքստում ոչ պետական բուհերի մեծ մասը չկարողացավ ապահովել կրթության անհրաժեշտ որակը և չդիմացավ մրցակցությանը:

Ինչպես վերը նշվեց, 2005 թ. Հայաստանը միացավ ENIC/NARIC կազմակերպությունը, որը պետք է նպաստեր որակավորումների փոխանակելիությանը և որակավորումների ազգային շրջանակի մշակմանը: Հայաստանում մշակվեց և ներդրվեց դիպլոմի միասնական հավելվածը, որը սկսեց գործածել 2007 թ., անցում կատարվեց երկաստիճան համակարգի՝ բակալավրիատ և մագիստրատուրա, որը պետք է ավարտվեր մինչև 2010 թ.: Ուսանողների շարժունությունը խթանելու համար ներդրվեց ECTS կրեդիտային համակարգը: Նախատեսվեց անցում կատարել ուսանողակենտրոն ուսուցմանը, սերտացնել կապը բարձրագույն կրթության և գիտական հետազոտությունների միջև:

2003 թ. Բեռլինի կոմյունիկետվ դրվեց այլ նշանակետ՝ մինչև 2005 թ. ներդնել որակի ապահովման ազգային համակարգեր, որոնք պետք է հավաստեն կրթության ոլորտում մատուցվող ծառայությունների որակը: 2005 թ. Բերգենի կոմյունիկետվ ճանաչվեց

⁷ Հայաստանի Հաերապետության սոցիալական վիճակը 2015 թվականին. էջ 4, 21, http://www.armstat.am/file/article/soc_15_6.pdf

⁸ Նույն տեղում, էջ 15, 47:

եռափուլ համակարգը: Ըսդունվեցին Որակի Ապահովման Եվրոպական Յանցի (ENQA) առաջարկած Բարձրագույն Կրթության Եվրոպական Տարածքում որակի ապահովման չափորոշիչները և ուղենիշները:

2011 թ. հուլիսի 19-ին հաստատվեց «Կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագիրը»⁹: Ծրագրում վերլուծվեցին կրթության ոլորտի բարեփոխումների 10 տարվա արդյունքները, զնահատվեցին ձեռքբերումները: Դրա հետ մեկտեղ վերլուծությունները ցույց էին տալիս, որ կրթական բարեփոխումները չեն ապահովում ժամանակի պահանջներին համապատասխան անհրաժեշտ որակը: Պատահական չէ, որ ծրագրում նշվում էր, որ «Բարեփոխումների շոշափելի և հասարակության կողմից արձնորվող ձեռքբերումների բացակայության պատճառով կրթության համակարգը հայտնվել է մի իրավիճակում, երբ խաթարված է կրթական հաստատությունների հեղինակությունը, վտանգված է վտահությունը բարեփոխումների և համակարգի ներուժի նկատմամբ»¹⁰: Կրթության ոլորտի գերինոյիրը համարվեց որակի բարձրացումը: Լուրջ խնդիր էր կրթության մատչելիությունը հատկապես աղքատ բնակչության համար: Ծրագրում նշվում էր, որ բարձրագույն կրթության համակարգում «աղքատ և ծայրահեռ աղքատ բնակչության ընզրկվածությունն ունի նաև տարածքային անհամամասնություն»: Մարզերի աղքատ բնակչության շրջանում այն 2,1, իսկ զյուղական համայնքներում 4,3 անգամ թիչ է»¹¹: Ուսման վարձը պետական բուհերում բավականին բարձր էր և կազմում էր աղքատ ընտանիքների ոչ պարենային ապրանքերի մի-

⁹ <http://edu.am/index.php/am/documents/index/91>

¹⁰ «Կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագիր», էջ 3, http://parliament.am/law_docs/190711HO246havelvats.pdf

¹¹ Նույն տեղում, էջ 7, http://parliament.am/law_docs/190711HO246havelvats.pdf

ջին տարեկան ծախսերի մոտ 50-65 տոկոսը¹²: Այդ պատճառով բարձրագույն մասնագիտական կրթության կարևորագույն խնդիրներից էր ուսման վարձի փոխհատուցման մեխանիզմների և անվճար կրթության ընդլայնումը: Ճիշտ է, 22 կառավարության կողմից մշակվեցին մի շարք ծրագրեր, սակայն դրանք միայն մասսամբ են լուծում կրթության մատչելիության հարցը:

Խնդիր կար երկաստիճան համակարգի հետ կապված: 5-ամյա կրթությունից երկաստիճանի անցնելիս թույլ տրվեցին մի շարք սխալներ: Բարձրագույն կրթության ոլորտի բաժանումը բակալավրիատի և մագիստրատուրայի ճիշտ չէր ընկալվում ոչ միայն հասարակության, այլև կրթության կառավարիչների մի մասի կողմից: Բակալավրիան ընկալվում էր որպես թերի բարձրագույն կրթություն: Մագիստրատուրան չէր դիտվում որպես կրթական աստիճան, որն ապահովում էր անհրաժեշտ որակավորում միայն այն մարդկանց համար, ովքեր ցանկանում են շարունակել հետազոտական աշխատանքը կամ զբաղվել դասավանդմամբ: Պատահական չէ, որ 2001 թ. հանրապետության 9 բուհում գործում էր ասպիրանտուրա և դոկտորանտուրա և միայն 3 բուհում՝ մագիստրատուրա¹³: 2007 թ. մագիստրատուրա կար միայն 4 պետական բուհում¹⁴: Մագիստրատուրայի նկատմամբ վերաբերմունքը սկսեց փոխվել միայն վերջին տարիներին: 2014/2015 ուսումնական տարում մագիստրոսի կրթական ծրա-

¹² Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Մաս 2. Հայաստան. Ոչ կուրական աղքատության ցուցանիշները, 2005 թ., էջ 15, http://www.armstat.am/file/article/bd_04_3.pdf

¹³ Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2001-2005 թվականների պետական ծրագիր, էջ 1, <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1422&lang=arm#1>

¹⁴ Մկրտչյան Լ.Օ., Развитие образования Республики Армения, стр 54, http://ru.by/iss/n24/MKRTCHYAN_24.pdf

զիր կար արդեն հանրապետության 33 բուհում ու նրանց 9 մասնաճյուղում և 3 գիտական կազմակերպությունում¹⁵:

Խնդիրներ կային կրեդիտային համակարգով մասնագիտական կրթության ծրագրերը փոխակերպելու հարցում: Բուհերին աջակցելու համար ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թ. հունիսի 19-ի N 588-Ա/Ք հրամանով ընդունվեց «Ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգը», որի նպատակն էր ապահովել բուհերի համար միասնական կանոնակարգային-կազմակերպական հեեր¹⁶:

Կրթական բարեփոխումները այլ հարթություն տեղափոխվեցին 2008 թ. «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի» (ՈԱԱԿ)¹⁷ ստեղծվելուց հետո: ՈԱԱԿ-ը պետք է որակի ապահովման գործընթացներ իրականացներ մասնագիտական ուսումնական հաստատություններում ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման միջոցով: ՈԱԱԿ-ի նպատակների մեջ մտնում է խթանել մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավումը, նպաստել կրթական համակարգի ինքնավարությանը և հաշվետվողականության մեխանիզմների ներդրմանը:

Հետևելով Բոլոնյան գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորություններին՝ ՀՀ կառավարությունը 2011 թ. հաստատեց ՀՀ որակավորումների ազգային շրջանակը (ՈԱՇ)¹⁸: ՈԱՇ-ով ամենաընդհանրական ձևով ներկայացվեցին կրթական

¹⁵ Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2015 թվականին, էջ 21, http://www.armstat.am/file/article/soc_14_11-12

¹⁶ https://hcrearmenia.files.wordpress.com/2011/04/orinakeli_kargi_final-ects.pdf

¹⁷ ՀՀ կառավարության 2008 թ. նոյեմբերի 27-ի թիվ 1486-Ն որոշում, <http://www.anqa.am>

¹⁸ ՀՀ կառավարության 2011 թ. մարտի 31-ի N 332-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին», <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=66856>

յուրաքանչյուր աստիճանի համար շրջանավարտի բնութագրիչ ները՝ զիտելիքի, հմտության և կարողության մակարդակով: ՈԱՇ-ի 6-րդ մակարդակը Վերաբերվում է բակալավրիատի աստիճանին, 7-րդը՝ մագիստրատուրային: ՈԱՇ-ը համապատասխանում է Որակավորումների եվրոպական շրջանակին: Դրա մշակման և հաստատման նպատակն էր ուսանողության շարժունությանը նպաստելու համար ամբողջ եվրոպական տարածքում ունենալ համընթեռնելի շնորհվող որակավորումներ:

Հետեւով Բերգենի կոմյունիկետին՝ ՀՀ կառավարությունը 2011 թ. հաստատեց մասնագիտական կրթության հավատարմագրման շափանիշները¹⁹, ընդունվեց «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը»²⁰: Կարգի համաձայն միջին և բարձրագույն մասնագիտական հաստատությունների համար սահմանվում էր հավատարմագրման երկու տեսակ՝ ինստիտուցիոնալ և ծրագրային: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը պարտադիր է, և մինչև 2018 թ. Վերջը բոլոր միջին և բարձրագույն մասնագիտական հաստատությունները պետք է դիմեն այն անցնելու համար: Ծրագրային հավատարմագրումը հենարավոր է միայն այն դեպքում, եթե բուհը անցել է ինստիտուցիոնալ հավատարմագրումը: Ի տարբերություն նախրդ շրջանի պետական հավատարմագրման²¹ և ինստիտուցիոնալ, և ծրագրային հավատարմագրումները ունեն շրջափուլային բնույթ, կրկնվում են կայուն պարբերականությամբ՝ շարունակական դարձնելով բուհերի թե՛ ինստիտուցիոնալ կարողություննե-

¹⁹ ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 30 N 959-Ն որոշում, <http://www.anqa.am>

²⁰ Նույն տեղում:

²¹ ՀՀ կառավարության 2000 թ. հուլիսի 7-ի N 372 որոշում, <http://www.anqa.am>

րի և թե՝ մասնագիտությունների կրթական ծրագրերի բարելավումը: Ըստ որում՝ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած բուհերը կարող են հավատարմագրվել 4 կամ 6 տարով, կամ սուսանալ 2 տարվա պայմանական հավատարմագրում: Մինչ այժմ հանրապետությունում հավատարմագրում է ստացել 16 պետական և ոչ պետական բուհ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը նպաստեց բուհերի ռազմավարական կառավարման խթանմանը, հաշվետվողականությանը, աշխատանքի ավելի մեծ քայլանցիկությանը, ուսանողակենտրոն կրթական միջավայրի ստեղծմանը:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը վերհանեց նաև այն, որ հանրապետությունում թույլ է զարգացած բուհ – գործադրություն կապը, որ բուհերի մասնագիտությունների կրթական ծրագրերը հաճախ չեն համապատասխանում զլրալ աշխատաշուկայի հարափոփոխ պայմաններին: Լավ չեն մշակված մասնագիտությունների կրթական ծրագրերի ելքային արդյունքները, հաճախ դրանք չեն համապատասխանում ՈԱՇ-ին: Այժմ հանրապետությունում փորձ է արվում բուհերը ծրագրային հավատարմագրման նախապատրաստելու համար անցկացնել փորձնական ծրագրային առողջիւթյուն: Նախատեսվում է, որ ծրագրային հավատարմագրումը կհզորացնի մասնագիտությունների կրթական ծրագրերը՝ դրանք ավելի գրավիչ դարձնելով ոչ միայն հանրապետության քաղաքացիների, այլ նաև օտարերկրյա դիմորդների համար:

2015 թ. Եվրոպայի կրթության նախարարների Երևանի զարգացնաժողովում ամփոփվեցին Բոլոնյան գործընթացի տաս տարվա արդյունքները, հաստատվեցին համաեվրոպական նոր չափանիշներն ու ուղենիշները և մշակվեց կրեդիտային համակարգի զարգացման նոր ուղեցույց: Դա նշանակում է, որ հա-

մաեվրոպական ինտեգրացիան տվել է իր դրական արդյունքները և նպաստել բուհերի և կրթական ծրագրերի համահունչությանը: Այս ավելի մեծ հնարավորություն է ընձեռում Հայաստանի ուսանողներին օգտվելու շարժունության տարաբնույթ ծրագրերից, որոնց սկիզբը դրեց «Էրազմուս Մունդուս» ծրագիրը (2007): Դրա հետ մեկտեղ հանրապետության առջև դրվեց նոր մարտահրավեր՝ ուսանողության շարժունությունը, ավելի լայն հնարավորություններ ընձեռելով ուսանողներին, ուժեղացրեց հանրապետությունից «ոսղեղների արտահոսքի» հիմնախնդիրը: Դրա ելքը ոչ թե նմանատիպ ծրագրերից հրաժարվելու է, այլ բարձրագույն կրթության ոլորտն ավելի մրցունակ դարձնելը՝ բուհերի ուսուուսային բազան հզորացնելու, ինովացիոն ծրագրեր ներմուծելու, օտարալեզու դասընթացների քանակը ավելացնելու, հետազոտակեն կրթությունը իրախուսելու միջոցով:

Նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգ

Ի տարբերություն բուհերի՝ հանրապետության նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները բնութագրվում են ավելի սահմանափակ ինքնուրույնությամբ: 2002 թ. եվրոպական երկրների կրթության նախարարներն ընդունեցին Կոպենհագենյան հոչակագիրը, որի նպատակն էր եվրախնտեգրումը, այդ ոլորտում եվրոպական կրթության որակի բարձրացումը, ուսանողների շարժունության իրախուսումը: Կոպենհագենյան և Բոլոնյան գործընթացները բավական շատ նմանություններ ունեն և ուղղված են եվրոպական կրթական տարածքի մրցունակության բարձրացմանը:

2004 թ. տվյալով կար 81 պետական միջին միջնակարգ ուսումնական հաստատություն, որոնցում սովորում էր 27.8 հազ.

սարդ²²: Ըոյն ժամանակ գործել է 27 միջին մասնագիտական ոչ պետական ուսումնական հաստատություն, որոնցում սովորում էր 2,7 հազ. մարդ²³: ՀՀ կառավարության 2008 թ. դեկտեմբերի 18-ի նիստի N 51 արձանագրային որոշմամբ մշակվեց «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության հայեցակարգը»: Հայեցակարգում նախանշվեցին ոլորտի հիմնախնդիրները և առաջիկա տարիների քաղաքականության հիմնական ուղղությունները:

2008 թ. նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում բարեփոխումներին աջակցելու, դրանք առավել արդյունավետ դարձնելու համար ստեղծվեց «Կրթության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն» հիմնարկը (ՄԿՈՒԶԱԿ): ՄԿՈՒԶԱԿ-ը պետք է աջակցեր ՄԿՈՒ մակարդակում Որակավորումների ազգային շրջանակի ներդրմանը, նպաստեր Հայաստանի Հանրապետությունում «Ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» սկզբունքի ներդրմանն ու լայն տարածմանը, աջակցեր պետական կրթական չափորոշիչների և այլ ծրագրերի մշակմանը, նպաստեր տարբեր հաստատությունների և կազմակերպությունների կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակի ապահովմանը: 2011 թ. հոկտեմբերին հաստատվեցին արհեստագործական ուսումնարաննի, պետական բոլեցի և տարածաշրջանային պետական բոլեցի նոր օրինակելի կանոնադրությունները և բոլոր արհեստագործական ուսումնարանները հանձնվեցին ՀՀ կրթության և գիտության նա-

²² Հայաստանը թվերով, 2005 թ., վիճակագրական տեղեկատու, էջ 2, http://www.armstat.am/file/article/arm_05_51.pdf

²³ Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2004 թվականին, էջ 14, http://www.armstat.am/file/article/soc_04_4.pdf

իսարարության ենթակայությանը: Մինչ այդ արդեն կրթական առաջավոր հայեցակարգերի և տեխնոլոգիաների ներդրման, ՄԿՈՒ համակարգում բարեփոխումները խթանելու համար հանրապետությունում ստեղծվել եր 12 տարածաշրջանային քոլեջ: Մեծ աշխատաք եր տարվել այդ քոլեջների լաբորատորիաների, համակարգչային լսարանների նորացման, նյութատեխնիկական բազայի հարստացման և վերազինման, ինչպես նաև շենքային պայմանների բարելավման ուղղությամբ:

2007, 2009, 2012 թթ. մշակվել են նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների չափորոշիչների և մոդուլային ուսումնական պլանները: ՀՀ կառավարության 2012 թ. հուլիսի 4-ի նիստի N 27 արձանագրային որոշման համաձայն հաստավեց «Մասնագիտական կրթության և ուսուցման 2012-2016 թվականների բարեփոխումների ծրագիրը»: Ծրագիրն ուղղված էր ապահովելու մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտի արձանագրված ձեռքբերումների և 12 տարածաշրջանային քոլեջների փորձի զարգացումը և ընդլայնումը: Ծրագրով նախանշվեցին ոլորտի զարգացման նպատակները և խնդիրները հետևյալ ուղղություններով՝ ՄԿՈՒ համակարգի ինտեգրում եվրոպական մասնագիտական կրթական տարածքին, համակարգի կառավարման արդյունավետության բարձրացում, ՄԿՈՒ ոլորտում սոցիալական գործընկերության ընդլայնում:

Կոպենհագենյան գործընթացով նախատեսվել է կրեդիտային համակարգ ներդնել նաև նախնական (արհեստագործական) մասնագիտական և միջին մասնագիտական կրթության ոլորտում: Թեև Հայաստանը չի միացել Կոպենհագենյան գործընթացին, սակայն ՄԿՈՒ ոլորտում բարեփոխումներ անցկացնելիս հետևում է դրա սկզբունքներին: 2014-2015 թթ. ուսումնական տարվանից որոշ մասնագիտությունների գծով կրեդիտային հա-

մակարգ է փորձնական ներդրվել պետական քոլեջների մի մասում: Իրականացվել է ՈԱՇ-ի ներդրման գործընթացից բխող մասնագիտությունների ցանկի և շնորհվող որակավորումների վերանայման գործընթաց: ՈԱՇ-ի 4-րդ մակարդակը համապատասխանում է նախնական մասնագիտական կրթությանը, 5-րդը՝ միջին մասնագիտականին: Կառավարության կողմից ընդունված վերոհիշյալ հավատարմագրման կարգը վերաբերվում է նաև միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին: Դրանց և բուհերի հավատարմագրման չափանիշներն ու չափորոշիչները նույնն են: Սակայն ի տարբերություն բուհերի, որոնց հավատարմագրման գործընթացը մեկնարկեց 2012 թ., քոլեջները դեռ նոր են մտնում գործընթացի մեջ: Առայժմ փորձնական հավատարմագրում պետք է անցնեն տարածաշրջանային 12 քոլեջները, այսուհետև մինչև 2018 թ. վերջը, ինչպես և նախատեսված է կարգով, մյուս բոլոր քոլեջները պետք է ներկայացնեն դիմում ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար:

2015/2016 ուս. տարում հանրապետությունում գործում եր նախնական մասնագիտական (արհեստագործական) ծրագիր իրականացնող 44 պետական ուսումնական հաստատություն, որոնցից 25-ը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և 19-ը՝ միջին մասնագիտական²⁴: Կան նաև ոչ պետական նմանատիպ ուսումնական հաստատություններ: Մեծարանակ ուսումնական հաստատությունների հավատարմագրում անցկացնելու համար այժմ ձևավորվում է փորձագիտական բազա: Առաջիկա տարիների գերակայությունների մեջ լինելու է այդ ոլորտի համար որակի ապահովման կայրերի նախապատրաստելը:

Այսպիսով, պարզ է դառնում, որ մասնագիտական կրթության ոլորտում բարեփոխումներն առաջիկա տարիներին շարու-

²⁴ Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2015 թվականին, էջ 1, http://www.armstat.am/file/article/soc_15_4.pdf

նակվելու են: Խնդիր է դրված բարելավել կրեղիտային համակարգը բարձրագույն կրթության ոլորտում և ներդնել միջին մասնագիտական կրթության ոլորտում այնպես, որ ապահովվի ՌԱՀ-ի 5-րդ և 6-րդ փուլերի միջև կրեղիտների փոխանցելիությունը և կրթության շարունակականության ապահովումը: Այդ գործընթացները ինքնին անհնար են առանց մասնագիտական ուսումնական հաստատությունների ինքնուրույնության աճի: Մոտ ապագայում անհրաժեշտ է մշակել նաև Որակավորումների սեկտորալ շրջանակները, որոնք կհեշտացնեն մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից մասնագիտության կրթական ծրագրերի մշակումը, նմանատիպ եվրոպական ծրագրերի հետ դրանց համապելիության ապահովումը: Երեանի զագաթեաժողովում 2015 թ. հաստատված Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում որակի ապահովման նոր չափանիշները և ուղենիշները (ESG), ինչպես նաև Կրեղիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգի (ECTS) նոր ուղեցույցը լավ հիմք են հանդիսանում ազգային փաստաթղթերի վերանայման և բարելավման համար:

ЛИЛИТ ЗАКАРЯН

РЕФОРМЫ В СИСТЕМЕ ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В 2005–2015 ГГ.

РЕЗЮМЕ

Реформы в системе высшего образования представлены в контексте Болонского процесса, в системе среднего профессионального образования – Копенгагского процесса (к которому Армения не присоединилась). Изменения в системе высшего образования стали видимыми после проведения государственной аккредитации. Были выработаны и утверждены Правительством РА Национальная рамка квалификаций Армении, Положение о государственной аккредитации и Критерии и стандарты государственной аккредитации

ции. В результате вузы страны, прошедшие институциональную аккредитацию, переходят на стратегическое планирование, важное значение приобретают отчетность, прозрачность управления, студентоцентрический подход к образованию. Следующей ступенью в реформе системы высшего образования является пересмотр академических программ, упор на потребности рынка и усиления связи между обучением и научными исследованиями, развитие внешних связей и международного сотрудничества.

LILIT ZAKARYAN

THE REFORMS IN THE PROFESSIONAL EDUCATION FIELD
IN THE REPUBLIC OF ARMENIA 2005-2015

SUMMARY

The reforms which are being realized in the professional education field are presented in this article. The reforms of higher education are presented in the context of the Bologna process and the reforms of secondary professional education in the context of Copenhagen process. The changes in the sphere of higher education became visible after the state accreditation procedure had been implemented. The national frame of the qualifications, the criterions and normatives of the institutional and programming accreditation were worked out and later confirmed by the Government. In the result of it, the universities which are institutionally being accredited have passed to the strategic planning, report, transparency of the management, contribution of the approach of centralized student body. The next step in the system of higher education has a goal to revise professional educational programmes, to adopt marketing approach, to strengthen the link between the teaching-research, to develop foreign relations and international cooperation.